և բացի այդ՝ դրամական նպաստներ բաժանեց եկաւորների առաջին պէտքերը հոգալու համար։

Կայսրուհին, Հայերի գաղթը դէպի Ռուսաստան քաջալերելով, չէր մոռանում մի կողմից խրախուսել այդ գործում իրեն աջակցող Յովսէփ սրբազանին. ուստի 25 մարտի 1793 ամի մի վեղարի խաչ պարգևեց նրան. միւս կողմից հրաւէր էր կարդում տեղական իշխանաւորներին օգնել իրեն և պատուիրում, որ իւր նոր հպատակների մասին ուշի ուշով հոգ տանեն։ Այսպէս նա՝ Եկատերինոսլաւի նահանգապետի ուշադրութիւնը հրաւիրելով այդ նորեկ հայերի վրայ, 23 փետրուարի 1793 ամի հրովարտակի մէջ պատուիրում էր նրան՝ լաւից լաւ ապահովել նրանց կացութիւնը, «որպէս զի ոչ միայն մեր սահմաններն անցած հայերը պահուին, այլ և տարաշխարհում մնացող նրանց կրօնակիցները, եկաւորների բարօրութիւնը տեսնելով, գան միանան նրանց հետ»։

Եկատերինէ Կայսրուհին փութաջան իրագործող հանդիսացաւ Պետրոս Մեծի գաղափարի, որ էր կործանել մահմեդական տէրութիւնը և անկախութիւն պարգևել նորա լծի տակ ընկճուած քրիստոնէական ազգերին։

Ցունական կոչուած ծրագիրը, որ այն ժամանակ զբաղեցնում էր մեծ Կայսրուհու պետական մարդոց միտքը, բովանդակում էր նաև դիտաւորութիւն վերականգնել Հայաստանի քաղաքական անկախութիւնը Ռուսիայի գերագոյն հովանաւորութեան ներքոյ։ Այդ մտքին առանձնապէս համակրում էին Պոտեմկին իշխանը և Ա. Վ. Սուվորովը։ Թէ որքան նրանք ջատագով էին այդ գաղափարին, կարելի է տեսնել ոչ միայն միւս պատմական արձանագրութիւններից՝ այլ և Յովսէփ արքեպիսկոպոսի յիշատակարանից։ «1 յունվարի 1780 ամի», գրում է նա, «ինձ մօտ եկաւ Յ. Պ. Գօրիչն և Կասպեան գաւառները նուաճելու համար դէպի Պարսկաստան ձեռնարկուելիք արշաւանքի լուրը հաղորդեց. հարցրեց, թէ քաղաքներն ինչ հեռաւորութիւն ունին իրարից, թէ որքան հայոց և մահմեդական զօրք կայ Դերբենդից ու Գիլանից մինչև Թաւրիզ և այնտեղից՝ մինչև Ղարաբաղ ու Շիրվան։ Ի՛նչ որ գիտէի՝ ասացի, և նա արձանագրեց»։—«2 յունվարի մեզ այցելեց Գիներալ Պորուչիկ Ա. Վ. Սուվորովը։ Նա էլ միևնոյն խնդրի մասին շատ հարցեր առաջարկեց. հանգամանօրէն տեղեկութիւն խնդրեց Ա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան